ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԸՍՏ «ՄԱՍԻՍ» ԹԵՐԹԻ (1852—1864)

Վ. Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արտաքին քաղաքական անբարենպաստ պայմանները, հաճախակի պատերազմները, հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, երկրի սոցիալ-տնտեսական կյանքի ծայրահեղ հետամնացությունը XIX դարի առաջին կեսերին արդեն հարցականի տակ էին դրել Օսմանյան միապետության գոյությունը։

Պետությունը կործանումից փրկելու նպատակով թուրքական սուլթանները դիմեցին բարեփոխումների (թանզիմաթ)։ 1839 թ. Գյուլհանեում հրապարակված հրովարտակը՝ Հաթթը-Շերիֆը, պաշտոնապես ազդարարում էր բարենորոգումների դարաշրջանը։ Նախատեսվում էր տերության բոլոր հպատակների հավասարություն՝ առանց կրոնի խտրության, անձի, գույքի և պատվի ապահովություն, զինավարժության նոր կարգ, հողային ռեֆորմներ, լուսավորության գործի բարելավում, փոփոխություններ հարկային քաղաքականության մեջ և այլն[1]։

Սակայն Հաթթը-Շերիֆի հիմնական սկզբունքները մնացին թղթի վրա և կյանքում չիրագործվեցին։ Վիճակն էլ ավելի ծանրացավ 1853—1856 թթ. Արևելյան պատերազմից հետո, երբ Թուրքիան և՛ տնտեսապես, և՛ քաղաքականապես ընկավ Անգլիայի ու Ֆրանսիայի ազդեցության տակ։ Այդուհետև Թուրքիայի ներքին և արտաքին բոլոր կարևոր հարցերը տնօրինում էին եվրոպական այդ տերությունները։

1856 թ. Անգլիայի և Ֆրանսիայի թելադրանքով սուլթանական կառավարությունը հրապարակեց բարենորոգումներ խոստացող նոր հրովարտակ՝ Հաթթը-Հումայուն, որը 1839 թ. Հաթթը-Շերիֆի վերամշակումն ու շարունակությունն էր և տրվում էր դիվանագիտական ոլորտներում Թուրքիայի վարկը բարձրացնելու և օսմանյան տերության մեջ տառապող քրիստոնյա ժողովուրդների պահանջները կանխելու միտումով։

Թե որքանով էր կենսունակ Թուրքիայի բռնած բարենորոգումների քաղաքականությունը, ինչպես էր այն կիրառվում կյանքում և ինչպիսին էր դրանից հետո հպատակ ժողովուրդների՝ մասնավորապես հայ ժողովրդի վիճակը օսմանյան բռնապետությունում, փորձենք ցույց տալ Կ. Պոլսում լույս տեսնող արևմտահայ թերթերից մեկի՝ «Մասիսի» ընձեռած նյութերով։

* * *

Օսմանյան բռնապետությունը, ձեռնարկելով «բարեփոխությունների» իր քաղաքականությունը, փորձում էր հավատացնել, թե իր երկրի «Հպատակ-

---

[1] *Տե՛ս* А. Д. Новичев. История Турции, т. II, ч. I (1792—1839), Л., 1968.

ները» այսուհետև օգտվելու են մահմեդականներին հավասար իրավունքներից, ազատ են լինելու կրոնական համոզմունքներում։

1854 թ. հոկտեմբերի համարում «Մասիսը» բավական տեղ է հատկացնում կայսերական նոր հրովարտակին, որը «գրավել է բոլոր Եվրոպայի ուշադրությունը»։ Թերթը գրում էր. «Օրինաց առջև քրիստոնեից քաղաքական հավասարությունը, ամեն քաղաքական ու զինվորական պաշտոններու անոնց հասնիլը, գլխահարկի տուրքին ջնջվիլը արդեն որոշված են...։ Ողբալի անկարգություններուն առաջքն առնելու ու ասկե ետև ընողները պատժելու համար՝ հատուկ դատաստանագիրք մը անմիջապես պիտի առաջարկվի»[2]։

Անտարակույս է, որ սկզբում այլադավանների մեջ որոշակի հույսեր արծարծեց «օրինաց առջև քրիստոնեից քաղաքական ազատության» վերաբերյալ կետը, որին այնպիսի եռանդով անդրադարձավ «Մասիսը», 1856 թ. № 231-ից մինչև № 243-ը տպագրելով Վառնայում մի բուլղար աղջկա եղեռնական սպանության մասին էջեր զբաղեցնող դատական ամբողջ պրոցեսի նյութերը։ Դա եզակի երևույթ էր ոչ թե բուն հանցագործության տեսակետից, քանի որ սպանությունների ու բռնաբարությունների և անպատիժ մնացած եղեռնագործությունների մասին ամենօրյա հակիրճ հաղորդումներով լի է թերթը։ Այդ պրոցեսը եզակի էր, որովհետև թուրք, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնյա հանցագործների հետ, որոնք կազմակերպել էին աղջկա առևանդումը, մեղադրական աթոռին էր նստած նաև Վասիլ անունով մի ոմն քրիստոնյա մեղսակից՝ մինչ այդ չտեսնված երևույթ, որը թերթը գնահատում էր որպես «փետրվարի 6-ի (18-ի) խաթթի Հումայունովը» սահմանված «օրինաց առջև հավասար ըլլալու սկզբանը» փայլուն ապացույց[3]։

Այս երևույթի գերագնահատությունն ինքնին արդեն խոսում է այլադավան ժողովուրդների ստորացված վիճակի մասին։ Սակայն թերթի ոգևորությունը շուտով իջնում է։ Այն իր սպասելիքներում հիասթափություն է ապրում, քանի որ օրենքի առջև բոլոր հպատակների հավասարության մասին իրականությունը նոր նյութեր չի տրամադրում և նման հաղորդումների մենք հետագայում այլևս չենք հանդիպում։

Այլադավանների նկատմամբ պետության ձեռք առած միջոցառումները հայտարարվում են նաև բարենորոգչական մյուս հրովարտակներում։ 1855 թ. մարտի 23-ին «Մասիսում» (№ 165) տպվում է հաղորդում նոր հրամանի մասին, ուր մասնավորապես հավաստիացվում է «վեհափառ ինքնակալին իր տերության քրիստոնյա ժողովրդոց վրա ունեցած ծայրագույն խնամքը»։ Այդ որոշումով «գլխահարկի (խարաճ) տուրքը վերցած է. զինվորական կարգի մեջ քրիստոնյա հպատակները մինչև գնդապետի (միրալա) աստիճան պիտի կրնան հասնիլ»։ Այդպես էր միայն թղթի վրա, իրականում այդ որոշումը ևս չիրագործվեց։ «Խարաճի» փոխարեն սահմանվեց «բեդ-էլ-ասկերիե» կոչվող մի տուրք, որը պարտադիր կերպով վճարելով՝ այլադավանները, այդ թվում նաև հայերը, ազատվում էին զինվորական ծառայությունից. մի տուրքը փոխարինվեց մեկ ուրիշով։

Հպատակներին վերաբերող օրենքներից բացի, մինչև XIX դարի 70-ականները թք. թուրքական կառավարությունը հրապարակում էր որոշումներ,

---

2 «Մասիս», 1854, № 142։

3 Նույն տեղում, 1856, № 231։

որոնք շոշափում էին պետական քիչ թե շատ կանոնավոր ապարատ ստեղծելու հարցեր և մեծ տեղ էին գրավում Թանզիմաթի սիստեմի մեջ։

1856 թ. փետրվարի 6/18-ին սուլթանական բարձրագույն հրովարտակով ազդարարված նոր օրենքների ընդունումը մեծ իրարանցում առաջացրեց Թուրքական կյանքում։

Որքան էլ «Մասիսն» ընդհանուր առմամբ զուսպ և չափավոր էր դեպի վերոհիշյալ բարենորոգումները և ըստ երևույթին մեծ հույսեր չէր կապում դրանց հետ (հավանաբար հիշելով 1839 թ. Հաթթ-Շերիֆից եկող փորձը), այսուհանդերձ հավուր պատշաճի նշում էր այդ իրադարձությունը։ Թերթի № 212-ում կարդում ենք, որ երկուշաբթի «մայրաքաղաքիս բոլոր եկեղեցիներուն մեջ կայսերական Խաթթի Հումայունը կարդացվեցավ, հրապարակական աղոթքներ ու բարեմաղթություններ եղան...»։

Կայսերական այս նոր հրովարտակը որոշ փոփոխություններ էր ազդարարում վարչական սիստեմում։ Նա, մասնավորապես, նախատեսում էր «հպատակ հասարակության կողմից ընտրված լիազոր» ունենալ Արդարության բարձրագույն ատյանում և տվյալ «հասարակությանը» վերաբերող գործերը քննարկելիս հաշվի առնել նրա կարծիքը։

Նախատեսվում էր կարգ ու կանոն հաստատել նաև գավառում։ Այստեղ տիրող շփոթն ու անկարգությունները վերացներու և Թանզիմաթի օրենքները գործադրելու համար մեծ էպարքոս Մուստաֆա Ռեշիդ փաշան հատուկ հանձնաժողով է ստեղծում, որի մշակած կանոններով որոշվում էր՝ գավառական բոլոր հասույթների ճիշտ հանրացուցակ կազմել, մարդահամար անցկացնել, «գավառական կառավարության բաժանմունքները լավ կարգի մը դնել», բանտերը բարեկարգել, ճանապարհներ շինել և այլն։ Գավառում կիրառվելիք վարչական վերաբաժանումը բխում էր Հաթթ-Հումայունի սկզբունքներից և նախատեսում էր նախկին փաշայությունների փոխարեն ստեղծել նահանգներ (վիլայեթներ), իրենց համապատասխան ենթաշրջաններով։ Այդ օրենքը վերջնական կերպարանք ստացավ 1864 թ. և ընդհանուր գործադրում գտավ 1867 թ.։ Սուլթանը, ըստ երևույթին վստահ չլինելով և՛ օրենքների կիրառելիությանը, և՛ մանավանդ գավառի բնակչության համակրանքին, հատուկ հրովարտակով կարգադրում է գավառի վերաբերյալ բարեփոխումները սկզբից գործադրել միայն Պրուսայում։ Թերթի հետագա հաղորդումներից երևում է, որ այնտեղ բարենորոգումները «հաջող են անցել». Պրուսայի նահանգը բաժանվել է չորս գավառի (սանջակ), մուխթարների (գյուղապետերի) 40 հոգուց բաղկացած ժողովում ընտրվել է 4 հայ, 4 հույն և 1 հրեա, կազմվել է նահանգական մեծ ժողով, առևտրական ատյան, խառն ատյան. մեծ ժողովում «հայոց և հունաց առաջնորդները իրենց ժողովրդյանը վերաբերյալ խնդիրներու մեջ... իրենց կարծիքը պիտի խոսին։ Հրեաներն ալ իրենց ազգին վերաբերյալ գործ մը պատահած ժամանակը իրավունք պիտի ունենան իրենց ազգակիցներեն մեկը հոն ղրկելու»։ Թերթը եզրակացնում է. «Բոլոր ժողովուրդը կրհուսա, որ կայսերական հրովարտակին այս բարի տնօրենությունները խիստ օգտակար արդյունքներ պիտի ունենա իրենց համար, թե որ ճշտիվ ի գործ դրվին»[4]։ Այս վերջին բառերից ակնհայտ է, որ Թերթը չէր հավատում այդ օրենքների գործադրությանը։

---

4 Նույն տեղում, 1857, №№ 277, 298 (ընդգծումը մերն է—Վ. Ղ.)։

«Մասիս» թերթի ընձեռած նյութերը մեզ իրավունք են տալիս կատարելու այն ընդհանուր եզրակացությունը, թե Ղրիմի պատերազմից առաջ և մանավանդ դրանից հետո դյուրին չէր վերացնել երկրի ներսում խոր արմատներ ղցած սոցիալական չարիքները։ Բարեկարգումները սվիններով էին ընդունվում հատկապես ծայրամասերում, որտեղ ծագած խռովությունները զսպելու համար սուլթանները հաճախ ստիպված էին լինում մայրաքաղաքից զինված ուժեր ուղարկել։

Բարեկարգումներին միայն առերես համակրանքով էր նայում հենց ինքը՝ թուրք պաշտոնեությունը, պալատականների մի զգալի մասը, նահանգապետերն ու մյուդիրները։ Ստեղծված իրադրությունից դժգոհ լինելու հետևանք էր նաև 1859 թ. Արդուլ Մեջիդի դեմ կազմակերպված դավադրությունը, որի մասնակիցները՝ ի թիվս այլ պահանջների, դեմ էին քրիստոնյաներին տված իրավունքներին։ Թուրքական ֆեոդալական իրականությունը 1850-ական թթ. դեռևս հասունացած չէր՝ ո՛չ արմատական բարեկարգությունների, ո՛չ էլ բուրժուական սահմանադրության համար։ Այս է հաստատում թեկուզ այն փաստը, որ 1876 թ. անցնելով իշխանության գլուխ, սուլթան Համիդը արագորեն ի չիք դարձրեց թանզիմաթի հիմնական օրենքները, արհամարհանքով արտահայտվելով ռեֆորմներ սիրող իր պապի, հոր և հորեղբոր մասին։

Այնինչ, մյուս կողմից, մոլեռանդ մուսուլմանական կրոնավորների ջանքերով, հրահրվում էին աղդամիջյան հակասություններ, քրիստոնյաների ներկայությամբ էր բացատրվում մահմեդականների ծանր վիճակը. այս ամենը բնակչության անդարդացած մասի մոտ ստանում էր կատաղի ատելության բնույթ, և ընդհանուր դժգոհությունն ու անհանդուրժողականությունը առաջին հերթին անդրադառնում էին քրիստոնյա ժողովուրդների կյանքի վրա, որոնց վիճակը Թուրքիայում գնալով դառնում էր անտանելի։ Հանդիսանալով պատրիարքարանի և լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսը, «Մասիսը» հաճախ բորբոքվին այլ նկատառումներով է անդրադառնում հայ, թուրք, հույն կամ հրեա աշխատավորների սոցիալական ծանր վիճակին, ձգտելով ցույց տալ կայսեր կամ մյուս մեծատոնների բարեգործությունները նրանց նկատմամբ։ Բայց հենց այդ նյութերն էլ բավական պատկերացում են տալիս իշխող դասի ամենօրյա կամայականություններին ենթակա, խավարի ու աղքատության մեջ տառապող ժողովուրդների կյանքի մասին։ Որքան դժվարին էր «Պեպեք բնակյալ աղքատ տաճիկի մը վիճակը», որը 1858 թ. ցրտաշունչ ձմռանը անկարող լինելով ընտանիքի համար ածուխ և ստակ հայթայթել՝ խելագարվում է հուսահատությունից («Մասիս», 1858, № 314)։ Կամ պատմվում է, թե ինչպես մի աղքատ հոնիացի ածխավաճառից ածուխ գնելիս սակարկում է նրա հետ՝ ի վիճակի չլինելով պահանջածը վճարել և երբ ածխավաճառը համառում է՝ հոնիացին դանակի հարվածով սպանում է վերջինիս (№ 313)։

Հայատառ թուրքերեն «Մեճմուայը հավատիս» լրագրից «Մասիսի» արտատպած հաղորդման մեջ խոսվում է Ակն քաղաքում տեղի ունեցած մեծ խռովության մասին, որի պատճառը հայկական եկեղեցիներում զատկի օրվա առթիվ զանգերի հնչեցնելն էր։ Քաղաքի թուրք բնակիչները, անտեսելով Հաթթը-Հումայունով քրիստոնյաներին տրված այդ իրավունքը, խումբ բաղմությամբ նախ բողոքի են գնում տեղի դատավորի մոտ, ապա հավաքվելով եկեղեցիների շուրջը, բռնությամբ վայր են իջեցնում զանգերը։ Հայ բնակիչները դիմում են հայոց պատրիարքին, վերջինս էլ՝ Բ. Դռանը և նորից հատուկ հրաման է

ուղարկվում Խարբերդի կուսակալին՝ որպեսզի «Ակնա քրիստոնեից եկեղեցիներուն մեջ կոչնակները վերահաստատել տա»։ Կուսակալի հրամանն ուղարկվում է մյուդիրին և սա տերության հրամանը կարդալու համար «երկրին ժողովը և քրիստոնեից գլխավորներն իր ապարանքը կը հրավիրե»։ Բայց նույն միջոցին վեց-յոթ հարյուրի չափ թուրք կանայք, իսկ նրանց մեջ նաև կանացի շորերով ծպտված տղամարդիկ, ձեռքերին տապարներ, քարեր ու գերանդիներ, դոռում-գոչյունով դիմում են մյուդիրի ապարանքը, բղավելով թե ոչ միայն չեն թույլ տա զանգերը կախել, այլև քանդելու են «գյաուրների» եկեղեցիները, սպանելու են հրովարտակը բերող պաշտոնյային և ներսում գտնվող «գյաուրներին»։ Մի քանի համար հետո (№ 399) թերթը տեղեկացնում է, որ խռովության սերմանողների մեջ են եղել Ակնի գավառական ժողովի անդամներից մի քանիսը և մուֆթին (կրոնական օրենսդիրը)։

Անապահով վիճակում էին ո՞չ միայն հայերը։

«Մասիսի» №№ 286, 293-ում կարդում ենք հաղորդումներ հրեա ծառայի նկատմամբ կիրառված վայրագ հաշվեհարդարի մասին։ Վենի բռնվելով մի քանի թուրքի հետ, հրեան, իբր, հայհոյում է Ղուրանը։ Այդ բավական էր, որպեսզի Թունիսի բեյի հրամանով, նրան ամենազազրելի տանջանքներից հետո գլխատեին։ Սակայն հատկանշական է, որ մոլեռանդ մուսուլմանների համար անհամեմատ ավելի տհաճ հետևանքներ էին ունենում այն անօրինականությունները, որոնք նրանք գործադրում էին եվրոպացի, հատկապես անգլիացի և ֆրանսիացի քրիստոնյաների նկատմամբ։ Վերջիններս անմիջապես կանխվում էին ոչ միայն տեղական իշխանությունների կողմից, քանի որ նրանք ստրկական վախ ունեին իրենց նոր տերերի հանդեպ, այլև այդ միջադեպերն անմիջապես ուժի ցուցադրական դատաստանի էին ենթարկվում եվրոպական հիշյալ երկրների ներկայացուցիչների կողմից, որոնք խուլ էին միայն «հպատակներին» ահարեկող հարստահարությունների նկատմամբ։

«Մասիսի» 1856 թ. № 255-ում հանդիպում ենք «Պոլս դր Օրիան»-ից արտատպված մի նյութի, ուր պատմվում է, թե ինչպես շուկայում առևտուր անող անգլիացի մի պաշտոնյայի սպասավորին ծեծելու, ապա Գալատայի մյուֆթիի կողմից ևս՝ հանցագործին պատժելու փոխարեն սպասավորին գավազանի 100 հարված հասցնելու պատճառով «անգլիական մի զինվորական նավ է եկել նավահանգիստ ու կանգնել Գալատայի դիմաց»։

Նույն թվականի № 257-ում տպված մի ուրիշ հաղորդման մեջ կարդում ենք, որ կայսերական զինվորական դպրոցի մի խումբ աշակերտներ իրենց ղեկավարի թույլտվությամբ անարգել են ֆրանսիական զինվորական գերեզմանոցը, մի կողմ են նետել շիրիմներին դրված խաչերը, դուռն մոտի մեծ քարը, որի վրա «պատերազմի պաշտոնյայի» թույլտվությամբ Ղուրանից մի տող մակագրություն է եղել։ Բայց Գ. Պոլսի ֆրանսիական դեսպանն անմիջապես միջամտում է դեպքին, և օսմանյան պետությունը պատասխանատվության է կանչում աշակերտներին, կարգազուրկ է անում և բանտարկում դպրոցականներին ուղեկցող փոխգնդապետին, պաշտոնից ու զինվորականությունից հեռացնում է հարյուրապետին։

---

5 Տե՛ս «Մասիս», 1859, № 394։

Ահա այսպես գործունյա էր թուրքական դատաստանը, երբ խոսքը վերաբերում էր իշխող երկրների քրիստոնյա ներկայացուցիչներին։ Բայց պատկերը բոլորովին այլ էր, երբ օրը ցերեկով մորթվում էր անզեն հայը։

«Մասիսի» № 293-ում հաղորդվում է, որ Պրուսայում բնակվող մի թուրք երեկոյան դեմ մտնում է հայաշատ թաղերից մեկը և ձեռքին պատրաստ պահած դանակով սպանում ու վիրավորում է պատահած «գյաուրին», առանց հաշվի առնելու սեռը և տարիքը։ Տեղական իշխանությունները հանցագործին հայտարարում են «խելագար» («Մասիս» № 294)։ Իսկ երբ սպանողը ոչ թե մահմեդական, այլ քրիստոնյա էր, ապա թուրքական արդարադատությունն անմիջապես դրսևորում էր իր դաժանությունը։ 1863 թ. № 598-ում «Մասիսը» առանց ծանոթագրությունների հակիրճ մի հաղորդում է տպում, ուր ասված է թե «մշեցի 18—20 տարեկան հայ երիտասարդ մը Մկրտիչ անուն՝ ասկեց քանի մը ամիս առաջ Օգմեյտանին Իզզեթ անուն տաճիկ մը սպաննած ըլլալով, չորեքշաբթի առտու կամուրջին գլուխը կախվեցավ»։

Մի ուրիշ հաղորդում գալիս է լրացնելու հպատակների նկատմամբ թուրքական «արդարադատության» կիրառած այս բացահայտ կողմնապահությունը. «Անցյալները,— գրված է «Մասիսի» 1853 թ. № 88-ում,— Պրուսայի մեջ հայ մը սպաննող տաճիկը դեռ բանտը կեցած է բարձրապատիվ կուսակալին հրամանավը, որ գ.սնիկա Ղ. Պոլիս իրկելու դիտավորություն ունի դատաստանը վերստին տեսնվելու համար, ըստ որում տեղվույս դատավորը վճռեց թե հանցանք չունի»։ Պարզ է, որ Կ. Պոլսում էլ մարդասպանին կարդարացնեն և պատժից կազատեն։

Խոսք չէր կարող լինել ազգերի հավասարության մասին, եթե բազաքում. բոլորի աչքի առաջ մի թուրք, դավազանի հարվածով, առանց այլևայլության սպանում էր հայ խանութպանի հղի կնոջը, որովհետև վերջինս, խառնվելով թուրքի չվճարած զուռուշների պատճառով ծագած վեճին, փորձում է հաշտեցնել ամուսնուն և սանձազերծված գնորդին։ Իսկ հարցաքննության ժամանակ թուրքը սառնասրտությամբ պատասխանում է. «Այո. ըսպաննեցի, ի՞նչ կըլլա եղեր. կնավուս չէ՞ մի» («Մասիս», № № 295, 307)։

Այդպիսի լկտի պատասխան է տալիս քննիչին նաև մի ուրիշ թուրք մարդասպան, երբ հայ երիտասարդ արհեստավորի մոտ նորոգելու տված հրացանի համար պահանջվածը վճարելու փոխարեն վիճում է նրա հետ և հրացանի կոթով այնպես է հարվածում երիտասարդին, որ վերջինս մահանում է։ «Ես,— ասում է նա,— դանիկա կրթելու համար ծեծեցի. բայց մեռավ. հայ մը մեռնելով ի՞նչ կըլլա եղեր» («Մասիս», 1853, № 93)։

Մեկ ուրիշ անգամ թերթին հաղորդում են, թե ինչպես էրզրումի մոտ պորտարույծ զապթիեների զոհն է դառնում գրոսանքի դուրս եկած 12 հոգուց բաղկացած քրիստոնյա մի ընտանիք։ Թուրք մարդասպանները ընտանիքի հացն ուտելուց ու զվարճանալուց հետո սուտ վեճի են բռնվում հյուրասիրողների հետ և սպանում են նրանց մինչև վերջին մարդը («Մասիս», 1859, № 391)։

«Մասիսի» № 331-ում նկարագրվում է, թե ինչպես չորս թուրք «կին գտնելու» նպատակով մտնում են հայկական մի տուն և այնտեղ 15—16 տարեկան մի աղջկա այնպիսի գազանային տանջանքների են ենթարկում, որ աղջիկը մահանում է։ Վրա հասնողները բռնում են չարագործներից երեքին, իսկ չորրորդին հաջողվում է փախչել։ Եվ ահա «հարցաքննող» մյուդիրին

մյուս երեքը «համոզում են», թե հանցանքը կատարել են ոչ թե իրենք, այլ փախչող չորրորդը, և մյուդիրը այս երեքին էլ ազատ է արձակում։

Քրիստոնյաներին հասցրած վիրավորանքներն ու պատիժները չունեն ո՛չ սահման, ո՛չ չափ։ Թերթի 1856 թ. № 235-ում կարդում ենք, որ Պրուսայի գավառի Զենկիլեր գյուղից Առաքել անունով 12 տարեկան աղքատ մի հայ տղա, որպես կալվոր ընդամենը 25 զուրուշով ծառայության է տրվում Բազար գյուղացի Բեկ անունով մի թուրքի մոտ։ «Անցյալ շորեքշաբթի օրը,— գրում է թերթը,— տղան կալ վարած ատենը՝ վերոհիշյալ Բեկ Ալին վրան կհարձակի «կալին ձիերը լավ չես վարեր ու կքնանաս» ասելով և կատաղաբար զանիկա կծեծե այնպես անխնա, որ տղուն շունչը հատնելով՝ կմեռնի»։

Թալանը և ավազակությունը կատարվում էր «արդարադատության» աչքի առաջ և մեծ մասամբ մնում էր անպատիժ, որովհետև դրան հետամուտ չէր ո՛չ տեղական և ո՛չ էլ կենտրոնական իշխանությունը։ «Մասիսի» 1864 թ. № 648-ում տպված է, որ կեսօրին Նիկոմեդիայի Լալե-Դերե գյուղը ավազակներ են մտնում և Զաքար անունով մի հայ գեղջուկի խոշտանգելով, իսկ կնոջ կրծքին եռացրած ձեթ լցնելով՝ ստիպում են հանձնել թաքցրած թանկարժեք իրերը։ Հարևան հայ կինը, որ ականատես է լինում այս բոլորին, չդիմանալով՝ աղմուկ է բարձրացնում, բայց ավազակները, ժամանակ չկորցնելով, հրացանի մի գնդակով լռեցնում են նրան։ Փաշայի ուղարկած քննիչները փոխանակ պարզելու եղելությունը և հանցագործների ետևից գնալու, գյուղում գեղջուկների հաշվին կերուխում են սկսում և ստիպում են նրանց ստորագրել, որ այդ ծախսերն իրենք՝ քննիչներն են արել։ Այս բոլորից հետո թղթակիցն ավելացնում է, թե իրենց գյուղերում համատարած է թալանը, այդ պատճառով գյուղացիը հասած բերքը թողնում են դաշտերում։

Սեբաստիայի մի խումբ բնակիչներ նամակ են գրում թերթի խմբագրությանը, ուր բողոքում են տեղական թուրքերի այլասերված վարքագծի դեմ։ Պարզվում է, որ նրանք դարանակալ սպասելով տների, դպրոցների և նույնիսկ եկեղեցիների մոտ, հրսում են հայ պատանիներ և բռնի ճնշման ենթարկելով նրանց՝ «բարոյական զեղծման» պատճառ են դառնում («Մասիս», 1864, № 636)։

«Մասիսի» 1862 թ. № 537-ում տպված է Կ. Պոլսի Պալաթ թաղից ուղարկված մի նամակ, ուր հայտնվում է, թե դպրոց կառուցելու համար կայսերական հրաման ունենալով, հայ բնակիչները փորում են դրա հիմքերը։ Սակայն թաղի թուրք բնակչությունը չբավարարվելով շենքի հետագա կառուցումը դադարեցնելու մասին իրենց ստացած նոր հրամանով, թափորով գալիս են այդ վայրը, լցնում են փորված հիմքերը, ավերում ու կոտրում են շինանյութը, հայտարարելով թե այդ դպրոցն «իրենց գործին վնաս է», հարձակվում են եկեղեցուց եկած հոգևորականների ու թաղային խորհրդի անդամների վրա, քարկոծելով վիրավորում են նրանց։

Ցավոր «Մասիսը» չի կատարում իր խոստումը և ինչ-ինչ պատճառներով չի հրապարակում ազգային գերազույն ժողովի ատենադպիր պ. Դալուստ Տ. Պողոսյանի գրառումները՝ Պրուսայի նահանգում կատարած իր ուղևորությունից, որոնք թերթի բնութագրմամբ «ազգային պատմության մեջ նշանավոր և միանգամայն տխուր թերթ մը պիտի էվելցնե» («Մասիս», 1852, № 19)։ Նա Պրուսա էր մեկնել մի հայաբնակ գյուղի մեջ պատահած «ցավալի դեպ-

քերուն պատճառավը», ուստի պարզ է, որ խոսքը վերաբերում էր հարստահարությունների մի շարանին։

Հայ գյուղացին բողոքի ձայն էր բարձրացնում ծայրահեղ հուսահատության մեջ, այն էլ վստահ չլինելով, թե դրանից իր վիճակը կբարելավվի։ Այդպիսի մի նամակ է տպում «Մասիսը» 1864 թ. № 655-ում, ուր Սերկեվլիկ գյուղից թերթին խնդրում են միջամտել Բարձր Դռանը, որպեսզի մի քանի հանցագործների, որոնց գյուղացիների գանգատների հետևանքով ի վերջո Կ. Պոլիս են բերել, հանկարծ «թեթև պատիժ մը» տալով հետ չվերադարձնեն, քանի որ այդ դեպքում ոչ միայն իրենց, այլև «մնացյալ ազգային գյուղերն ալ մյուս խժաբարո բռնավորաց բոլորովին զոհ կըլլան»։ Նամակում տառապյալ գյուղացիները հայտնում են, որ մի փոքրիկ գավառում 20-ից ավելի ինքնընտիր մյուդիրների ու «նույնչափ բարբարոս տերեպեկիներու» ձեռքից «տակավին ճաղակոտոր կըլլա խեղճ ժողովուրդ մը», որի մեծ մասը հալածանքից ազատվելու համար տուն-տեղ թողած լցվել է Պոլիս։

Անլուր ճնշումներն էին, որ ստիպում էին հայ ժողովրդի առանձին հատվածներին կա՛մ ընդվզել ու զենքը ձեռքին պայքարել թուրքական բռնապետության ազգային կեղեքումների ու անօրինականության դեմ և կա՛մ՝ «ի վիճակի չլինելով դիմելու զինված ապստամբության», թողնել հայրենիքը ու գաղթել Ռուսաստան և այլուր։ «Հաթթը-Հումայունից» երեք տարի անց, 1859 թ. № 362-ում, «Մասիսը» տպում է մի հաղորդում, ուր բացահայտ է դառնում հայերի մասսայական արտագաղթը։ «Տրապիզոնեն մայրաքաղաքիս Ռուսական լրագրին գրված նամակ մը լուր կուտա, թե ժամանակ մը ի վեր այն կողմերու ժողովրդոց մեջ Ռուսիո հպատակ գրվելու եռանդը օր ըստ օրև ավելնալու վրա է, և արդեն քանի մը հազարի չափ մարդիկ՝ Տրապիզոնեն Խութայիս երթալ գալով՝ քանի մը օրվան մեջ և ընդամենը 120—150 զուռուշ ծախք ընելով Ռուսիո հպատակ գրվեր են»։

«Մասիսը» տագնապով է պատմում Պրուսայի Ենիճե-Քյոյ գյուղում կատարված դեպքերը։ Տասնյակ տարիներ շարունակ հարևան Բաբա-Սուլթան գյուղի թուրքերը ավերում ու թալանում էին հիշյալ հայկական գյուղը։ Ի վերջո տեղական իշխանությունները որոշում են վերջ տալ նման դրությանը և բաբասուլթանցիներին պարտավորեցնում են հատուցել հայերին պատճառած վնասները։ Հայերը փոխհատուցում չեն ուզում, այլ միայն բարոյական հաշտություն են խնդրում և պայման են դնում, որ այսուհետև թուրքերն իրենց չհալածեն։ Բայց ահա 12 տարի անց, ամեն ինչ սկսվում է նորից։ Լկտիությունն այն ատիճանի է հասնում, որ մի քանի հայի լծում են իրենց սայլերին և եզների տեղ քշում են, մինչև վերջիններս ուժասպառ վայր են ընկնում։ «Մեկ խոսքով իշխանություն չկա հոս»,— իր խոսքն ամփոփում է նամակագիրը և ավելացնում է, որ Ենիճե-Քյոյի հայ բնակիչները ստիպված թողնում են իրենց գյուղը և լցվում Պրուսա կամ գնում են օտար վայրեր («Մասիս», 1862, № 551)։

Եվ այս երևույթը գնալով ավելի մեծ ծավալ է ընդունում։ Հայերի փախուստը սեփական հարենիքից լուսաբանում են նաև օտար թերթերը։ Նման հաղորդումներից մեկում «Մասիսը» մեջբերում է անում ֆրանսիական «Պատրի» լրագրի 1863 թ. իետրվարի 17-ի համարից, ուր՝ «Քյուրտերուն ձեռքեն

---

6 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 207, 276։

մուշեցի հայերուն կրած հարստահարությունները» պատմելով, թերթն ավելացնում է, թե նրանք «ուրիշ ճար չեն գտեր իրենց թշվառության բայց եթե հայրենիքնին ձգելով փախչիլ» («Մասիս», № 576)։

Ժողովուրդը կա՛մ փախչում կա՛մ ապստամբում էր և կա՛մ ճարահատյալ շարունակում էր ապրել Թուրքիայում՝ աչքի առաջ ունենալով օրհասը, այնինչ արևմտահայ մտավորականությունն ուրույն ուղիներ էր որոնում ստեղծված վիճակից դուրս գալու համար։ Վերը հիշված № 576-ում վաղուց ի վեր եվրոպական կողմնորոշում ունեցող, և այժմ արդեն թուրքական ռեֆորմներից հիասթափված «Մասիսը» իր տեսաբան Վ. Պառնասյանի բերանով առաջին անգամ պարզորոշ շարադրում է հայ բուրժուազիայի ներկայացուցիչների այն ակնկալությունները, որոնք հանգում էին Եվրոպայից սպասվող օգնության։ «Արդեն Եվրոպացվոց մեջեն,—գրում է նա,—մեծահամբավ անձինք մեր վրա կարեկցությամբ նայիլ սկսեր են...»։

Այսպիսով, Պոլսի «Մասիս» թերթը թեև «օսմանյան բարեփոխում տերության» հետ հաշտ ապրելու ուղիներ էր որոնում և ընդհանուր առմամբ հավատում էր ռեֆորմների ուժին, բայց մյուս կողմից մերկացնում էր թուրքական դաժան իրականության մեջ տիրող կամայականությունն ու հպատակ ազգերի նկատմամբ կիրառված անմարդկային քաղաքականությունը, բացահայտում տերության ձեռք առած բարենորոգումների անիրական լինելը և իր ձևով արձագանքում տառապող ժողովուրդների ձայնին, թեև ստեղծված վիճակից դուրս գալու տեսանկարները տեսնում էր եվրոպական տերությունների օգնությանը ապավինելու քաղաքականության մեջ։

ПОЛОЖЕНИЕ ЗАПАДНЫХ АРМЯН ПО ГАЗЕТЕ «МАСИС» (1852—1864)

В. Г. ГУКАСЯН

(Резюме)

Статья посвящена анализу опубликованных в «Масисе» в 1852—1864 гг. материалов, касающихся положения западных армян в Османской империи в указанные годы.